

# Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019Թ.  
№ 19 (509)

www.syuniacyerkir.am

**Պարմության  
քառուղիներով քայլել  
ենք երկար՝  
Անդեկ, ցաքուցրիվ,  
անգաղափար...**

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



## Մեղրիի Փոքր թաղի եկեղեցին Նորովի բացեց դռները

Սեպտեմբերի 17-ի օրը Սյունիքում նշանավորվեց Մեղրու Փոքր թաղի Սուրբ Հովհաննես (Սբ Սարգիս) եկեղեցու վերակառուցման, վերականգնման ծրագրի ավարտին նվիրված միջոցառմամբ, որին մասնակցում

էին Հայաստանում ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպան Լին Թրեյսին, դեսպանության աշխատակիցներ, ՀՀ գիտության, կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Նարինե Թովսիկյան-Խաչատրյանը, Սյու-

նյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, մարզային եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, եկեղեցու վերականգնմանը նպաստ բերած կազմակերպությունների ներկայացուցիչներ, հյուրեր:

ԱՄՆ դեսպանների մշակութային արժեքների պահպանության հիմնադրամը երեք տարի առաջ մեկնարկած այս ծրագրի իրականացման նպատակով տրամադրել էր 510 հազար ԱՄՆ դոլարի դրամաշնորհ: Այն հիմ-

Էջ 2

## Հյուր էր ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին

**Սեպտեմբերի 15-ին եռօրյա այցով Սյունիք ժամանեցին Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Լին Թրեյսին, դեսպանության քաղաքական եւ տնտեսական հարցերով պատասխանատու Մեթյու Փթիթը:**

Օրվա երկրորդ կեսին դիվանագետները եղան Սյունիքի մարզպետարանում, որտեղ կայացած հանդիպմանը մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանը եւ խորհրդական Գոռ Թադեոսյանը: Դեսպան Լին Թրեյսին զրույցի սկզբում ասաց, թե ինքն արդեն նկատում է, ինչպիսի գործընկերային հարաբերություններ են ձևավորվել ԱՄՆ դեսպանատան եւ Սյունիքի մարզի միջև, ինչը դեսպանատունը ցանկանում է շարունակել եւ զարգացնել: Եվ քանի որ նրա առաջին այցն էր Սյունիք, հետաքրքրվեց մարզի տնտեսության առջև ծառայած առաջնահերթ խնդիրներով եւ մարտահրավերներով: Մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանը նախ շնորհակալություն հայտնեց ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցներով մարզում իրականացված ծրագրերի համար եւ բավարարեց դիվանագետի հետաքրքրությունը, մասնավորապես

նշելով, որ մարզում խնդիր է դրված զարգացնել գերաշրջությունը եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտը: Դեսպանը նաեւ հետաքրքրվեց մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունների հարուցած բնապահպանական խնդիրներով:

Կապան այցելելիս դիվանագետը նկատել էր մարզկենտրոնի կառուցվող օդանավակայանը եւ ցանկություն հայտնեց իմանալ դրա թողունակության եւ հնարավորությունների մասին:

Դեսպան Լին Թրեյսին հաստատեց «Սյունյաց երկիր» հարցը, թե այցը Սյունիքի մարզ ձանաչողական է եւ փոխանցեց, որ մինչ Հայաստանի դեսպան նշանակվելը դիվանագիտական աշխատանք է կատարել Ռուսաստանի Դաշնությունում, Աֆղանստանում, Պակիստանում, Միջին Ասիայի հանրապետություններում: Իսկ առաջին տպավորությունը, որ ստացել է Հայաստանից, այն է, որ նախ ջերմ ընդունելության է արժանացել, դրական տրամադրվածություն է տեսել, որ տիրում է Հայաստանում, տպավորված է հայ ժողովրդի աշխատասիրությամբ:

Վերջում դեսպանն ավելացրեց, որ այցի զխավոր իրադարձությունը սեպտեմբերի 17-ին Մեղրիում կայանալիք մի միջոցառում էր: Խոսքը Հայաստանում ԱՄՆ դեսպանների մշակութային արժեքների պահպա-



նության հիմնադրամի ծրագրի ավարտի մասին է, որի շրջանակում իրականացվել է ուղ միջնադարյան շրջանի Սբ Հովհաննես (Սբ Սարգիս) եկեղեցու վերակառուցումը, որի նպատակով տրամադրվել է 510 հազար ԱՄՆ դոլար: Հիմնադրամի շնորհիվ վերականգնվել են եկեղեցու եզակի որմնակարները, ապահովվել են ջրահեռացման, օդափոխության համակարգերը, փոխվել է տանիքը, բարեկարգվել դեպի եկեղեցի տանող ճանապարհը:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Էջ 2

## «...Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին»

Հատված Սամվել Ալեքսանյանի համանուն խմբագրականից՝ նվիրված Հայաստանի անկախության 25-ամյակին («Սյունյաց երկիր», 6 սեպտեմբերի 2016 թ.)

...Հիմա ընդունված է ասել, որ մեր անկախությունը խորհրդային Միության կամ Ռուսական կայսրության փլուզման հետեանք էր: Իրականում, մինչդեռ, անկախ պետականության վերականգնումը հայ ժողովրդի պատմության հասունացած պտուղն էր, միանգամայն տրամաբանական ու պատճառաբանված արդյունքը, դեպի հավերժություն միտված ազգային մեր երազանքի դրսևորումը:

1980-ականների վերջին եւ 90-ականների սկզբին ազգովի ոգեւորված էինք, ինչ-որ առումով սավառնում էինք երազների մեջ եւ համոզված էինք, որ անկախությունն անվտանգ, ապահով ու լուսավոր գալիք կրերի հայ ժողովրդին...

Մեզ թվում է՝ չկա մի հայ, ում չի մտահոգել հայ ժողովրդի հերոսական էպոսի ոչ հերոսական ավարտը՝ Վանա քարի մեջ Մեծի փակվելը եւ այնտեղից ելնելու անորոշ հեռանկարը:

« - Որ աշխարհ ավերվի, մեկ էլ շինվի,  
Երբ ցորեն էղավ քանց մատուր մի,  
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,  
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք  
Էդրեղեն»:

Հայոց անկախ պետականության վերականգնումը միլիոնավոր հայեր ընկալեցին դյուցազնավեպի տրամաբանության մեջ՝ Մեծին իր Քուռկիկ Ջալալով ազատագրվել է, շղթայագեր է եղել...

Հետո, սակայն, անկախության համար «հայտնաբերեցինք» գործընթաց բառը, եւ մեր բազմաթիվ ձգտումներ ու երազանքներ ձապաղվեցին ու շեղվեցին կյանքի դիմադրությամբ:

Այդ բոլորով հանդերձ, 1991-ն այն ժամանակն էր, երբ յուրաքանչյուր հայ ասաց՝ ես իմ հայրենիքի գավալն եմ: Այնպես որ՝ անկախ պետականությունը մեր ազգային արժանապատվության բարձրագույն դրսևորումն է եւ հավիտենական արժեք է:

Ուրեմն եւ՝ երախտագիտության ու հպարտության զգացումով հիշենք բոլոր նրանց, ովքեր 1991 թվականին իրականություն դարձրին մեր ազգային երազանքը, եւ հայոց աշխարհի վրա կրկին ծառագեց անկախության աստղը:

\*\*\*

Հայ ժողովուրդն իր հազարամյակների պատմության մեջ շատ փորձությունների ու արհավիրքների միջով է անցել: Եվ այդ ամենից դասեր քաղելը, հետեություններ անելն անհրաժեշտություն է եղել ու մնում է մինչեւ այսօր:

Գոնե մեկ-երկու դրվագ, կարծում ենք, արժեր հիշել...

Հիշել է պետք, թե Քերթոզհայր խորե-

# Նիկոլ Փաշինյան. «Զանգեզուրի հանքավայրի սեփականարներին ասել եմ, որ հանքն այս ձեւով չի կարող շահագործվել»

**- Զանգեզուրի պղնձամուլիբդենային հանքավայրի սեփականարներին հետ հանդիպման ժամանակ ասել եմ, որ հանքն այս ձեւով չի կարող շահագործվել:**

Այդ մասին սեպտեմբերի 16-ին՝ իր մեծ ասուլիսի ժամանակ նշեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Ես հասկանում եմ, որ եթե ասեմ՝ հիմա գնացեք այդ խնդիրը լուծեք, դա նշանակում է փաստացի փակել կոմբինատը: Ես կասեմ, որ պետք է գնանք այդ կանոններով: Մենք բոլորի նկատմամբ պետք է այդ կանոնները կիրառենք», - ասաց Փաշինյանը:

Նա հավելեց, որ Զանգեզուրի հանքի գերմանացի սեփականատերերին բառացիորեն ասել է հետեւյալը. «Ինչ-որ մի ժամանակացույց պետք է ունենանք, կլինի 3 տարի, թե 5 տարի, որից հետո հանքը պետք է աշխատի այն նույն ստանդարտներով, որով կաշխատեր Գերմանիայում»:

«Դուք չեք գտնի մի զարգացած երկիր, որը չի անցել հանքարդյունաբերության միջով: Մենք պետք է այնպես անենք, որ ոչ թե Հայաստանից



տանից հանքաքար արտահանվի, այլ ՀՀ-ում ձուլարաններ գործեն, որ հանքի աշխատելու արդյունքում մեր օգուտը եռապատկվի, տասնապատկվի:

Ոսկու հանքերն առավել կարեւոր են Հայաստանի անվտանգության տեսակետից: Մենք պետք է այնպես անենք, որ Հայաստանում աֆինաժի գործարան լինի: Այսինքն՝ ոչ միայն ոսկի ստանանք, այլ այն հարգադրվի: Այսինքն՝ այդ ոսկին լինի պատրաստի վճարամիջոց, որով մեզ անհրաժեշտ սպառազինությունը գնենք: Սա է Հայաստանի հավասարակշռված շահը», - ասաց ՀՀ վարչապետը:

# «...Ու պիտի դառնա եւ երկիրը, ուր ձգտում է մեր հոգին»

Էջ 1 | Նազին ինչպիսի ցավով է ողբում հայոց թագավորության (Արշակունիների ցեղից) 428թ. անկումը. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը, որովհետեւ վերացան թագավորը, խորհրդականը եւ ուսուցանողը. վրդովեց խաղաղությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»:

Հայ ժողովուրդը ողբասացության այդպիսի առիթ ունեցավ նաեւ 1045 թվականին, երբ մեր ներքին դավաճանության հետեանքով բյուզանդական բանակը գրավեց Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անին: Եթե Ամենայն հայոց կաթողիկոս Պետրոս Գեղազարծը գոնե մի քիչ սիրեր իր հայրենիքը, այդպիսի կորցրած չիններ հայի արժանապատվությունը եւ այդքան հեռացած չիններ քրիստոնեությունից, ապա Բագրատունիների թագավորությունը նման մեր ազգի համար ամոթալի վերջաբան չէր ունենա:

անօրեն ու պիղծ գործերը... Մենք այդ վիճակից ոչ մի ելք կամ հնար չենք կարող գտնել, բացի Պարսից թագավորին բողոքելուց, որպեսզի նրան հեռացնի թագավորությունից... Խնդրում ենք քեզ՝ այս խորհրդի մեջ միաբան լինել մեզ հետ»:

Երկար ու տառապալից մտորումներից հետո Հայոց քահանայապետն այսպես պատասխանեց նախարարներին. «... Քակ լիցի, որ ես մատնիչ լինեմ մեր ճշմարիտ հավատին եւ իմ հոտի մոլորյալ ոչխարը հանձնեմ անհավատներին՝ ծանակելու... Արդ, եթե իմ եկեղեցու վիրավոր ոչխարը տանելու լինեին առողջ բժշկի մոտ, կշտապեի եւ չէի հապադի: Իսկ ամենախախտից ատյանին մատնել իմ հիվանդացած հոգետոր որդու՝ ն՝ երբեք հանձն չեմ առնի»:

Դրան հաջորդեց նախարարների խիստ արձագանքը՝ «... Դու էլ քահանայապետ չես մնա մեր աշխարհի վրա»:

Եվ Սասնայան Կռամ 5-րդ թագավորը Տիգրանի դատական ատյան կանչեց հայոց թագավոր



# Մեդրիի Փոքր թաղի եկեղեցին Նորովի բացեց դռները

Էջ 1 | Նադրամի կողմից ֆինանսավորված ամենախոշոր ծրագիրն է Հայաստանում: Հիմնադրամի շնորհիվ վերականգնվել են որմնանկարչության հայկական ու պարսկական ոճերը մեկտեղող եզակի որմնանկարները, ինչպես նաեւ ձեւավորվել է ջրահեռացման համակարգը, փոխվել տանիքը, տեղադրվել օդափոխության համակարգը, բարելավվել դեպի եկեղեցի տանող ճանապարհը:

Եկեղեցու վերականգնումը մեկնարկել էր 2016-ին մանրակրկիտ հետազոտական աշխատանքներով, որին հաջորդեցին բուն վերականգնումն ու վերակառուցումը, իսկ դրան զուգահեռ մասնագիտական խումբը զբաղված էր եկեղեցում գտնվող որմնանկարների վերականգնմամբ:

Եկեղեցու վերաբացման առիթով խոսք ասաց դեսպան Լին Ռեյսին՝ մասնավորապես նշելով, որ այդ գողտրիկ որմնանկարներով եկեղեցին դառնալու է հայ-ամերիկյան բարեկամության խորհրդանիշ: Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմից գերաշնորհ Գեորգ Եպիսկոպոս Սարգսյանը Նորին սուրբ օծություն տեր տեր Գարեգին երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի անունից բարեմաղթանքներ հղեց Մեդրիի Փոքր թաղի Սուրբ Հովհաննես եկեղեցու վերականգնմանը նվիրված միջոցառման առիթով, քանզի երկարատե դադարից հետո Սուրբ Հովհաննես եկեղեցին իր դռները բացեց այցելուների առջեւ: Հոգեւորականը համոզմունք հայտնեց, որ Սուրբ Հովհաննես եկեղեցու վերականգնումը հոգեւոր վե-



րածնդի նոր սկիզբ կդառնա Մեդրիի համայնքի կյանքում, նոր ձեռքբերումներով կհարստացնի վաղեմի քաղաքին բնորոշ մշակութային միջավայրը:

Նախարարի տեղակալ Նարինե Թովիկյան-Խաչատուրյանը եւս երախտագիտություն հայտնեց ամերիկյան կառավարությանը՝ օժանդակության համար: Նա հիշեցրեց Հովհաննես Թումանյանի խոսքը: Մեծ լուռեցին ցեղասպանության տարիներին անկեղծորեն խոստովանել էր, որ որեւէ մեկ պետություն ձեռք չէնկնեց Հայաստանին այդ ողբերգական շրջանում՝ բացի ամերիկյան ժողովուրդից:

Սյունիքի մարզպետի խորհրդական Գոռ Թաղետոյանն իր խոսքում կարեւորեց Սյունիքի համար պատմամշակութային արժեք ներկայացնող եկեղեցուն երկրորդ կյանք պարգևելը, որն ըստ ամենայնի կաշխուժացնի համայնքի հոգեւոր

կյանքը: Հրապարակվեց այն կազմակերպությունների եւ անհատների անունները, ովքեր աջակցել են ծրագրի իրականացմանը:

Պաշտոնական արարողությունից հետո միջոցառման մասնակիցները ծանոթացան վերականգնման աշխատանքներին, հարյուրավոր մոմեր վառվեցին, աղոթք հղվեց առ Բարձրալը:

Արարողությունից հետո ձեպագրույց ունեցանք «Մաստարա արտադրական կոոպերատիվ» ընկերության նախագահ Արման Ավանեսյանի հետ, ով տեղեկացրեց, որ եկեղեցու վերաշինման աշխատանքները մեկնարկել են 2018-ի հունիսից եւ ընդգրկում էին նաեւ տարածքի բարեկարգումը: Միջնադարյան եկեղեցու վերականգնման աշխատանքներին մասնակցել է 8-10 շինարար:

ՎԱՅՐԵՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ողբալու առիթ ունեցանք 1375թ. ապրիլի 16-ին եւս, երբ մամուլներին հանձնվեց Սիսի միջնաբերդը եւ գերեվարվեցին Կիլիկիայի Լեւոն Զ թագավորը, Մարիամ թագուհին, Պողոս կաթողիկոսը...

Առհասարակ հայ ժողովուրդը տասը անգամ համազգային (համահայկական) պետություն է կերտել, որից ինը կորցրել է, ինչը պետք է միշտ հիշել:

Պետականությունը կորցնելու ամեն մի դեպք իր պատճառներն ու նախապատմությունն ունի: Բայց եւ դրանք հանգեցնում են մի ստույգ եզրակացության՝ ազգերի լինելիության համար ավելի մեծ երաշխիք գոյություն չունի բնության մեջ, քան անկախ պետությունն է, համազգային պետությունը:

Ոչ միշտ են մեր ազգային ոչ բոլոր գործիչներն են, ցավոք, գիտակցել (գիտակցում) անքննելի ու անսակարկելի այդ ճշմարտությունը: Բայց եւ եղել են անհատականություններ, որոնց պահվածքն առ այսօր օրինակ եւ ուղեցույց է մեզ, նաեւ գալիք սերունդների համար: Նկատի ունենք, օրինակ, Հայոց սուրբ կաթողիկոս Սահակի վարքը, որ դրսեւորվեց հայոց Արտաշես Գ Արշակունի թագավորի ծակատարի շուրջ հայոց ավագանու եւ կաթողիկոսի միջեւ տեղի ունեցած քննարկումներում, ինչը հիշեցնում է Ղազար Փարպեցի պատմագիրը «Հայոց պատմություն» թողոթ Վահան Մամիկոնյանին» գրքում:

Միայն ինչ ասացին հայոց նախարարները մեր մեծ քահանայապետ Սահակին. «Այլեւս չենք կարող հանդուրժել թագավորի այսօրինակ

րին ու կաթողիկոսին, ովքեր էլ զահրնկեց արվեցին, իսկ Հայաստանը կորցրեց անկախ պետականությունը...

Դա տեղի ունեցավ Քրիստոսից հետո 428 թվականին:

Փաստորեն՝ Հայոց նախարարների խնդրանքով Պարսից թագավորը վերացրեց հայոց պետականությունը. առանց պետության, առանց թագավորի, ըստ էության, ապազգային նախարարների համար ոյուրին էր արել:

Դրանից 1571 տարի անց՝ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, մենք մեր ձեռքով գլխատեցինք հայոց պետության երկու առաջնորդի՝ Վազգեն Սարգսյանին ու Կարեն Դեմիրճյանին՝ պետությունը մղելով փորձանքների ու փորձությունների նոր հուն...

Կամ աշխարհում մեկ այլ ժողովուրդ, որի ավագանին, անձնական նկատառումներից էլնելով, ձեռք բարձրացնի իր իսկ ամենամեծ արժեքի պետականության վրա:

\*\*\*

Սույն առաջնորդող հողվածը վերնագրեցինք Ամենայն հայոց բանաստեղծի խոսքով: Նրա խոսքով էլ ավարտենք՝ «Հոյսի հայրենիք/Լուսիսի հայրենիք»:

Հոյսի եւ լուսի անկախիցով էլ շնորհավորենք միմյանց՝ մեր անկախ պետության ծննդյան օրվա կապակցությամբ:

Եվ, իհարկե, ողջույն մեր թանկագին հայրենիքին:

Ողջույն գալիք տարիներին ու գալիք սերունդներին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



# ՌՈՒՄԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՊՈՆԶԻԱ՝ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ



ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱԼԵՔՍԵՅ ԱՊՈՒԽՏԻՆ**  
1840 - 1893

**ՄԱՀԱՅՈՂ ՄԱՅՅՐԸ**  
(Ֆրանսերենից)

«Ի՛նչ, մահացա՛մ, թե՛ ողջ է դեռ: Կամաց խոսեք: Երևի թե կարողացավ թնել կրկին...»,  
Ու մեկն առաց. «Երեխային ներս բերեցեք Եվ դրեցեք նրա կրծքին»:  
Ու այնպես, ուր՝ բարբախտում էր սիրտը նրա,  
Լաց լինելով՝ կրեխան էր դեմքն իր թաղել...  
Օ, հենց հիմա թե քսացեց աչքերը ևս՝  
Ուրեմն՝ վե՛րջ, ձեզ մնում է լուկ աղոթել:




Ու ամեն ինչ հենց այդ կասյի  
Գաղտնիքից է ևսխակերպվել:

Ծովն է հեռում կրծքով իր մեծ...  
Յայգում՝ ծովի փրփուրն ասես  
Գունաթափված յասաման է՝  
Մուգ-լազուրե սևոթի մեջ:

Թող շուրթերն իմ գրկեն նորից  
Իրենց ևսխակին մնջուղունը,  
Այն բյուրեղյա լուռ հնչունը,  
Որ ինձ հեղ էր ծնված օրից:

Աֆրոդիտե՛, մնա՛ փրփուր,  
Բա՛ն, մեղեդի կրկին դարձիր,  
Սի՛րտ, այն արտից դու ամաչիր,  
Որ կյանք մերս ավերան մարտը...

Աշխարհահռչակ դիրիժոր, ջութակահար Վլադիմիր Սպիվակովի 75-րդ հոբելյանական տարեդարձի առիթով, մինչև տարեվերջ, հայերեն լեզվով լույս կտեսնի երաժշտագետ, մշակութաբան և գրող Սողոմոն Վոլկովի



Սողոմոն Վոլկով

հեղինակած «Զրույցներ Սպիվակովի հետ» գիրքը: Հայ ժողովրդի լավագույն բարեկամին ներկայացնող այդ գրքի թարգմանությունը և տպագրությունը նախաձեռնողների խնդրանքով գրքում տեղ գտած չափածո դրվագները ռուսերենից թարգմանել է մեր հայրենակից բանաստեղծ Տիգրան Գրիգորյանը: Նպատակահարմար գտանք «Սյունյաց երկիր» թերթի ընթերցողներին ներկայացնել այդ գրքի համար Տիգրան Գրիգորյանի թարգմանած ամբողջական ստեղծագործություններից մի փունջ:

**ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ**  
1873 - 1924

Լույսի շողերն ամառը ձեռքել  
Ու փայլերով շագնող,  
Այնձաման ջրի վրա  
Շե՛րք ևս փոխել արծաթագույն:

Այլքն ասես շրապում է, որ՝  
Յուրերի մեջ բոցավառովի,  
Նպրո հասնի ափի ժայռին  
Ու մթնդա՛մ այնպես մեռնի...



**ԱՆՆԱ ԱՆՄԱՏՈՎԱ**  
1889 - 1966

Նրա մեջ այրվում է երկնասաթ ինչ-որ բան.  
Դրոշմված նրա ջերմ աչքերի ցուրտում...  
Երբ այդքա թափվում են ինձ անգամ մոտենան,  
Լուկ ևս է միշտ ինձ հեղ սրտացավ գրուցում:

Երբ վերջին ընկերն իմ իր դեմքը թաքցրեց,  
Նա եկավ գերեզման, ինձ հեղ էր վերադին,  
Ու ձայնով ամառայի այնքան խո՛ղ ևս երգեց,  
Որ կարծես ծաղիկներն ամենուր խոսեցին:



**ՆԻԿՈԼԱՅ ՌՈՒԲՅՈՎ**  
1936 - 1971

**ՉՄԵՌԱՅԻՆ ԵՐԳ**



Գյուղում չեն մարել դեռ ողջ լույսերը:  
Դու ինձ մի՛ նեղիր գիրքը փխրության:  
Պայծառ ցուրտով գողտրիկ աստղերը  
Նուրբ զարդարել են երկինքը ձմռան:

Խաղաղ ցուրտ են ջրնաղ աստղերը...  
Օջինդրն է խոյ ձայնով աղմկում...  
Շար դա՛ն են եղել իմ ձայնիսները...  
Տեսնե՛ս՝ վշրերն իմ ուրբե՛ղ են վխարում...

Մի համեստ աղջիկ ինձ լուռ ժպտում է,  
Ես էլ նրան ևս ժպիտ պարզում...  
Ամեն վարդաբար բան միշտ մոռացվում է,  
Երբ որ աստղերն են զգվանքով շողում...

Ո՛վ է ասել, թե բուրն ի գորտ է  
Մարգագեղիկը դարձնել շամբուր,  
Ո՛վ է ասել թե հույսը կորչում է...  
Ո՛վ է մոզոնել այդ կեղծիքը սուր:

Գյուղում չեն մարել դեռ ողջ լույսերը:  
Դու ինձ մի՛ նեղիր գիրքը փխրության:  
Պայծառ ցուրտով գողտրիկ աստղերը  
Նուրբ զարդարել են երկինքը ձմռան:

**ԱԼԵՔՍԱՆՈՐ ԲԼՈՎ**  
1880 - 1921

Անորդրում գիշերվա, երբ տազնասար թնի,  
Ու բաղաբը թաղվի մթնության մշուշում  
Արարիչն իր անմահ մեղեդին կփոխի,  
Ու դյուրից հնչուններ կլավեն խավարում:

Ինչխ է պետք անդեմ փոթորիկն այս կյանքի,  
Երբ վարդերը բացված ինձ համար են  
այրվում,  
Ում են պետք հեղեղված արցունքներն  
անրեղի,  
Երբ հոգուս զգվելով՝ մայրամուտն է շիկնում:

Ընդունի՛ր, անհունի վեհաշուք Տիրուհի՛,  
Տանջանքիս արնագույն, մահաշունչ  
խորթերից՝  
Գավաթը փրփրած իմ վերջին այս կրթի,  
Քո անմիտ, անազնիվ, անարժան ստրուկից:



**ՍԱՐԻՆԱ ՑՎԵՏԱԵՎԱ**  
1892 - 1941

Ինչ-որ նախնիս եղել է լավ ջութակահար,  
Լավ ձիավար ու ձանաչված հայրերի մի գող,  
Նենց դրանից է իմ բնույթն այսքան թասիտ,  
Ու վարսերս՝ միշտ բուրում ևս բամու  
բույրով:

Արդյո՞ք ևս չէ, որ ձեռքով իմ անցնող սայլից,  
Թոցնում է աստրաբայր լուրբ ծիրաններ...  
Անշուշ, ևս է մեղավորը մեղսուր կյանքիս.  
Մապարաթիթ բախրախնդիրն այդ  
զանգրահեր:

Նա մասուրը շուրթերի մեջ պարելով  
Մանկային է զննել տեսքով իր փրփուլան:  
Վար ընկեր էր, բայց եղել է ամբողջ սրտով  
Նվիրվող մի գորովալից խենթ սիրելիս:

Լուսնկաթն ու չիբուխներն է ևս շար սիրել,  
Ուրանքներն ո՛ւ ևս սիրուն աղջիկներին...  
Ու կարծում եմ, որ վախկոտ է մի թիչ եղել,  
Իմ դեղնասյա, վայելչարես խելառ նախնին:

Մարանային գրոշներով չի ծառայել,  
Կեսգիշերին գերեզմանոց չի մերել ևս:  
Ես կարծում եմ՝ ևս դաշույն է միշտ էլ կրել  
Ու կոշիկի ճիտքի մեջ է եղել նրա:

Ինձ թվում է ևս իր կյանքում շար անգամ է  
Մթնության մեջ կարողի ևման ճարպիկ  
ցարկել...  
Ու որքան էլ ունակ պնդեն՝ ինձ թվում է,  
Որ ջութակ ևս երբեմիցե չի նվագել:

Լուրջ իմաստից գուրկ էր կյանքն այս նրա

**ՕՍԻՊ ՄԱՆՂԵԼՇԱՍ**  
1891 - 1938

Silentium



Երբ դեռևս ևս չի ծնվել,  
Նա՛ւ ե՛րբ է, ե՛ւ մեղեդի,

**ԻՈՍԻՖ ԲՐՈՂՍԿԻ**  
1940 - 1996

**Բանաստեղծական րներ (1978)**



XXIII  
Ամեն բան բերում է փառավորության...  
չի՛ կարող վերջանալ դառնությանը:  
Բայց ոչ մի նորոյրս տեսություն  
չի՛ գրադվում ասվածի մեկնությունը:  
Ամեն ինչ հմացող ստրիկին՝  
դժվար է լուրջ ստրիկ համարել:  
Թե ևստեղ փոշին քո սեղանին՝  
չես կարող դու նրան էլ սրբել:

**ԲՈՒԼԱՍ ՕԿՈՒԶՎԱ**  
1924 - 1997

ՄԵԿՆՈՒՄ

Վլադիմիր Սպիվակովին









### Սյունիքում էպոխա է փակվում. Արթուր Վանեցյանի պաշտոնանկությունը խանդավառությամբ է ընդունվել երկրամասում

**Սեպտեմբերի 16-ին Քաջարանում երկապի իրավիճակ էր. գաղութարարները սուգ էին հայտարարել, իսկ արժանապատիվ քաջարանցիները շամպայն էին բացում...**

Տոնական օր էր նաև Կապանի բեռնատարների վարորդների համար. նրանք էլ հույս էին փայփայում, թե Արթուր Վանեցյանի բեռնատարներին, ի վերջո, իրենց բեռնատարները կփոխարինեն:

Միայն հիմա է հասկանալի դառնում, թե ԱԱԾ-ի Երեանի պատասխանատուներից մեկը (գրեթե ծպտված) ինչու էր ուղեկցում Սյունիքի նորանշանակ մարզպետին:



Արթուր Վանեցյանը արդեն նոր աշխատանք է գտել...  
Լուրեր են շրջանառվում, որ Արթուր Վանեցյանը կդառնա Հանգեգուրի ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնին (ԶՊՄԿ)

տնօրեն... Այս պահի դրությամբ Վանեցյանի բիզնեսներից մեկը հենց ԶՊՄԿ-ի հետ է կապված: Նրա բեռնատար ավտոմեքենաները պղնձի եւ մոլիբդենի հումք են տեղափոխում:

### Փառահեղ հաղթանակ. Լիլիթ Առաքելյան արժանավորը վերադառնում է Սյունիք գյուղի դպրոց

**2019 թ. սեպտեմբերի 10-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անահիտ Թումանյանը հրապարակեց վճիռ թիվ ՍՂ2/0062/02/18 քաղաքացիական գործով:**



2018 թ. փետրվարի 23-ից սկիզբ առած եւ մեկուկես տարի շարունակված դատաքննության արդյունքում անվավեր ճանաչվեց Սյունիքի երբեմնի մարզպետ Վահե Ա. Հակոբյանի 2018 թ. հունվարի 23-ի կարգադրությունը` Լիլիթ Առաքելյանի աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ:

Սյունիքի տարածքային իշխանության համար անցանկալի անծ: Հարցի պատասխանը քանիցս հանրայնացրել ենք, բայց մեր խոսքի տրամաբանությունը պահանջում է վերստին ու շատ համառոտ անդադարձ կատարել դրան:

Ըստ վճիռի` Լիլիթ Առաքելյանին վերականգնել «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում:

Վերջինիս տեղյակ էին պահել նաև, որ Լիլիթ Առաքելյանը թերթ է ընթերցում, այն էլ «Սյունյաց երկիր», որ 2018 թ. համար բաժանորդագրվել է «Սյունյաց երկիր», որ երբեմն-երբեմն այդ թերթում հոդվածներ է հրատարակում:

Չօգուտ Լիլիթ Առաքելյանի բռնագանձել եւ 100 հազար դրամ, որպես փաստաբանի վարձատրության գումար (Սյունիքի մարզպետարանից եւ «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ից):

Մարզպետը կարգադրել էր ստուգումներ սկսել «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿում, որի տնօրենն էր Լիլիթ Առաքելյանը:

... Երկար սպասված այդ իրադարձության կապակցությամբ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը, նաև պարբերականի հազարավոր ընթերցողների անունից, շնորհավորում է Լիլիթ Առաքելյանին, նրան հաջողություններ մաղթում եւ անձնական-ընտանեկան կյանքում, եւ իր սիրելի բնագավառում` աժող սերնդի կրթության եւ դաստիարակության գործում:

Եվ, այդ բոլորով հանդերձ, օրվա հերոսը Լիլիթ Առաքելյանն է, որի վարքն ու հատկապես վեհանձնությունն ու քաջությունը` Սյունյաց աշխարհի ազնվագրամ դատերին բնորոշ, հարգանքի ու գնահատանքի, նաև ընդօրինակման արժանի է:

Ընթացումով մոտեցավ երբեմնի ընկերներին ու բարեկամներին, ովքեր այդ իրավիճակում կողք կանգնեցին` տեղավորվելով կշեռքի ծանր նժարին:

Սամվել Ալեքսանյան

